

# Տ. ԱՐՇԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՈՍՅԱՆ

Ծնվել է 1974 թ. մարտի 19-ին Վրաստանի Հանրապետության Նինոծմինդայի (Բոգդանովկա) շրջանի Սաթխա գյուղում:

1979 թ. ընդունվել է տեղի միջնակարգ դպրոցը:

1989 թ. տեղափոխվել է ՀՀ Նաիրիի շրջանի Բուժական գյուղ:

1990 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

Նույն թվականին ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1996 թ. մայիսի 19-ին Մայր Տաճարում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Գերշ. Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի:

Նույն թվականի հունիսին ավարտել է Հոգևոր Ճեմարանի վեցամյա դասընթացը:

1996-97 թթ. աշխատել է «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում:

1997 թ. հոկտեմբերի 30-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանում պաշտպանել է ավարտաճառ՝ «Հայ Եկեղեցու գույքի և կայքի բռնագրավումները Հայաստանում 1920-1925 թթ.» թեմայով:

1997 թ. դեկտեմբերի 14-ին, ձեռամբ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյանի, Մայր Տաճարում ձեռնադրվել և օծվել է կուսակրոն քահանա:

1998 թ. նշանակվել է Արմավիրի թեմի առաջնորդական փոխանորդ:

1999 թ. Վեհափառ Հայրապետի հրամանով նշանակվել է ՀՀ Զինված ուժերի հոգևոր առաջնորդ:



ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՏՎՉՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՉԵՐ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

2000-2004 թթ. համապեղությամբ կապարել է ՀՀ ՆԳ քրեակատարողական հիմնարկների հոգևոր առաջնորդի պարտականությունները:

2004 թ. Գերմանիայի Ռեգենսբուրգ քաղաքում մասնակցել է գերմաներենի եռամսյա դասընթացներին:

2005 թ. մեկնել է Բուլղարիա՝ սովորելու Սոֆիայի Համալսարանում:

Նույն թվականի հունիսի 25-ին Մայր Աթոռում պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Հինգերորդ դարի հայ պատմագրության Աստվածաշնչային շերտը» թեմայով, և նույն օրը Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Գերշ. Տ. Արշակ եպս. Խաչատրյանի, ստացել է մասնավոր վարդապետական աստիճանները: